**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11**

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «09» նոյեմբերի 2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.**

«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**

Ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշեց, որ «Էֆ-լայն Թրեյդինգ» ՍՊԸ-ի, «Բի Լայն» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի, «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**3.** Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունները՝ «Էֆ-լայն Թրեյդինգ» ՍՊԸ-ի, «Բի Լայն» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի, «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի մասնակցության իրավունքը և ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Գնահատող անձնաժողովը որոշեց՝**

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և
-1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «էֆ-լայն Թրեյդինգ» ՍՊԸ-ին,
-2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Բի Լայն» ՍՊԸ-ին,
-4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին,
-7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ին,

2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),

3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, իրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ Էդգար Մելքոնյան

Անդամներ՝
Էդգար Տոնականյան
Գրիգոր Գաբրիելյան
Արթուր Թամրազյան
Խորեն Պետրոսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան